

## ԲՆԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՓԻԼՍՈՓԱՅԱԿԱՆ ԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆԻ «ՈՒՍՏԱ ԿԱՐՈ» ՎԵՊՈՒՄ

Բ. գ. դ. ՀՈՎԻԿ ԱՅՎԱԶՅԱՆ

*«Ժողովրդական լեզվի ընտիր բառերը, սեղմ ու սերտ, պատկերավոր ոճերը, պարզ ու շքեղ ձևերը, էսօր արդեն ամենաթանգ զարդերն են համարվում հայ գրողի երկերի մեջ...»: (Հովհ. Թումանյան)*

Իսահակյանի «Ուստա Կարո» վեպը մեր ազգային գրականության անմահ գործերից է, որի ստեղծմանը նա հասել է կյանքի փորձով իմաստնացած և հարազատ ժողովրդի դարավոր տառապանքները նկատի ունենալով:

Խորապես ծանոթ լինելով համաշխարհային գրականության նվաճումներին, Իսահակյանը վեպը գրելիս աչքի առաջ ունեցել է, ինչպես նշում է ակադեմիկոս Ս. Սարինյանը, Սերվանտեսի «Դոն-Կիխոտի», Ալֆոնս Դոդեի «Տարասկոնցի Տարտարենի», Շարլ դը Կոստերի Ուլենշպիգելի և Լամմե Գուդակի արկածների, ինչպես նաև Գոգոլի ստեղծագործությունների գրական փորձը: Ուրեմն անվարան կարելի է ասել, որ Իսահակյանը, հենվելով համաշխարհային գեղարվեստական փորձի վրա, ստեղծել է բարձր մակարդակի ազգային էպոս՝ իրականի և առասպելականի վարպետ միահյուսումով:

Վեպն ունեցել է երկու տարբերակ: 1912 թ. հունվարին նա արդեն ավարտել էր առաջին տարբերակը, սակայն տպագրության չէր հանձնել, որովհետև մտածում էր, որ դեռ օրակարգից դուրս չի եկել «Հայկական հարցը», ուստի շարունակում է աշխատել երկրորդ տարբերակի վրա: Հետագայում այդ տարբերակի որոշ հատվածներ տպագրվեցին մամուլում, իսկ առաջին տարբերակը այդպես էլ մնաց անտիպ: Միայն 2006 թ. «Հրաշյա Աճառյան» համալսարանի հրատարակությամբ լույս տեսավ վեպի առաջին տարբերակը՝ Ս. Սարինյանի առաջաբանով և Ավիկ Իսահակյանի վերջաբան խոսքով:

«Իսահակյանի ազգային էպոսը» առաջաբանում Ս. Սարինյանը գրում է. «Համաշխարհային փորձի յուրացմամբ Իսահակյանն ստեղծել է իսկական իմաստով ազգային էպոս, հայոց էթնիկ բնավորության, կենցաղի ու բարքերի, պատմության, առասպելի ու իրականության միֆոլոգիան՝ անկրկնելի մի երևույթ հայ վեպի պատմության մեջ»<sup>1</sup>:

<sup>1</sup> Ավ. Իսահակյան, «Ուստա Կարո», 2006թ., Ե., «Տիգրան Մեծ», էջ 18 (այսուհետև՝ մեջբերումները նշվելու են միայն էջերով):

Վեպը կառուցված է ազգային բանահյուսական տարրերի, ավանդությունների ու սովորույթների հիմքի վրա, որոնք դարերի հեռավորությունից մեզ են նայում պարզ ու մաքուր կենցաղավարության հիմքերով, փիլիսոփայական խորհրդածություններով, բնականի և իդեալականի զուգորդումներով:

Հազարամյակների ընթացքում հայ ժողովուրդն իր քաղաքական վիճակի, ապրած ուրույն կյանքի ու պայմանների հիմքի վրա ստեղծել է առածներ, ասացվածքներ, փիլիսոփայական խոհեր, որոնք արտացոլվել են ինչպես ժողովրդական բանահյուսության, այնպես էլ գեղարվեստական գրականության մեջ՝ ցույց տալով հայ մարդու ապրելակերպն ու գործելակերպը, աշխարհի ու մարդու մասին պատկերացումները: Պատահական չէ, որ թունանյանը մեծ ուշադրություն էր դարձնում ժողովրդական իմաստությունների, հակիրճ ու պարզ խոսքի օգտագործման և կիրառման վրա: Նա գրում էր. «Մեր լեզվի ու գրականության առողջ զարգացման համար պետք է տեղ հատկացնել հայրենի երկրի ժողովրդական բանավոր գրականությանը, նրա ամեն տեսակ ավանդություններին, հեքիաթներին, առակներին, առածներին»:

Ահա ժողովրդի դարերի կենսափորձը մենք տեսնում ենք Իսահակյանի փիլիսոփայական մտորումներում, որ այնպես առատորեն սփռված են նրա չափածո և արձակ գործերում: «Իմ սիրտը բնության հետ, տիեզերքի մշուշի հետ, հեռավոր աստղերի հետ է ապրում, նրանց սիրով, նրանց ցավով ցավում», – գրում է Իսահակյանը:

Մենք ձգտում ենք ուշի ուշով հետևել մեծ մտածողի իմաստասիրական մտքերին ու դատողություններին, և ինչպես Ա. Ս. Պուշկինն է ասել՝ «Մեծ մարդու մտքերին հետևելը ամենահետաքրքրաշարժ գիտությունն է, որ հնարավորություն է տալիս մտորելու, թափանցելու այդ մտքերի խորքը և ըմբռնելու մարդու գոյության իմաստը»:

Ժամանակին Իսահակյանը խորապես ուսումնասիրել ու յուրացրել էր Արևելքի և Արևմուտքի փիլիսոփաների հայացքները, որոնց հիման վրա ստեղծել էր աշխարհընկալման իր տեսակետը և դրանք արտահայտել էր ոչ միայն «Աբու-Լալա Մահարի» պոեմում ու խոհափիլիսոփայական բալլադներում, այլև «Ուստա Կարո» վեպում: Իսահակյանի մտահղացմամբ վեպը պետք է լիներ տասնամյակներով քննարկվող «Հայկական հարցի» գեղարվեստական արձագանքը, որն իր մեջ պիտի ներառեր ազատագրական պայքարի մի շարք դրվագներ, այդ թվում՝ ֆիդայական շարժումը, հայ ազգային կուսակցությունների գործունեությունը և այլն:

Վեպի գլխավոր կերպարը՝ ուստա Կարոն, յուրահատուկ փիլիսոփա է, որ կշռում է աշխարհի չարն ու բարին, միաժամանակ իրեն պատկերացնում է իր ժողովրդի ճակատագրի համար մարտնչող հերոսի դերում: Նա հաճախ է անդրա-

դառնում աշխարհի դրվածքին, հասկանում է, որ Աստու ստեղծած աշխարհը ծուռ է կառուցված, և հորինում է իր «տեսած» հեքիաթ-աշխարհի առասպելը, որը նման է Թումանյանի մշակած «Ռսկի քաղաքը» հեքիաթում պատկերված իդեալական երկրին: Սոցիալական ուտոպիայի այս գաղափարը իր բնույթով փիլիսոփայական է և աչքի առաջ ունի մեր ժողովրդական բանահյուսության լավագույն նմուշները, «Սասունցի Դավիթ» էպոսը և նրանցում արտահայտված ազատասիրական, հայրենասիրական, եղբայրության ու խաղաղության գաղափարները:

Կյանքը պատկերելով իրականության և երևակայության սահմաններում, Իսահակյանն ստեղծում է Ուստա Կարոյի և նրա ընկերների առասպելական պատմությունը, բացահայտում ժողովրդի պատմական հիշողության ներքին ծալքերը, ոճավորում սյուժեի ազգային-բանահյուսական տարրը, ընդլայնում պատումի խոհափիլիսոփայական տարածքը, դրանք հարստացնում քաղաքական ու բնախոսական բազմաթիվ իմաստներով: Այդ փիլիսոփայական խոհերը, որ այլ կերպ կոչվում են աֆորիզմներ (*Իսահակյանը դրանք անվանում է խտացումներ*), մեր ժողովրդի հավաքական մտքի իմաստուն դրսևորումներ են և արտահայտում են մտածողության ազգային բնույթը, միաժամանակ հեղինակի «ռոմանտիկ, քնարական, մարդկային խառնվածքը»: «Եվ աֆորիզմը հանձնելով թղթին,– գրում է Ավիկ Իսահակյանը,– բանաստեղծն ասես լիցքաթափում է իր շիկացած, հավետ պրպտող ուղեղը, թեթևացնում իր տառապալ հոգին»<sup>1</sup>:

1924 թ. հոկտեմբերի 25-ի նամակներից մեկում Իսահակյանը գրում է, որ ընթերցողն իր վեպում կգտնի այն բոլոր մտքերը, որ հուզել են իրեն, իսկ իրեն հուզել են ազգի, հայրենիքի, ազատության, պատերազմների, Աստծո, տիեզերքի, բարոյականության, մարդու գոյության, կյանքի ու մահվան բազմաբնույթ խնդիրներ: Եվ, իսկապես, Իսահակյանի խտացումները բացահայտում են թե՛ գրողի քաղաքական հայացքները, թե՛ վերաբերմունքը երկրում իշխող կարգերի և թե՛ ժողովրդի սոցիալական վիճակի նկատմամբ: Գլխավոր կերպարի միջոցով Իսահակյանը ներկայացնում է նաև իր գեղագիտական հայացքները, իրերի ու երևույթների ներքին էության մեջ թափանցելու կարողությունն և գրական ճաշակը:

Իմաստության ծովին հասած բանաստեղծի փիլիսոփայական մտորումների շարունակությունն են կազմում Ուստա Կարոյի, Օրթե Զարուբի, Շրջիկ Կայծակի և մյուս հերոսների խոհերը, որ դարձել են թևավոր խոսքեր և սփռվել վեպի հարյուրավոր էջերում: Զայաստամի անցյալն ու ներկան, հայ ժողովրդի անցած դարավոր դժվարին ճանապարհի քննությունը Իսահակյանի հերոսների մտորումների մշտական առարկան են, որ ունեն նաև ժամանակակից հնչողություն:

Ուստա Կարոն մոռացել էր իր անձնական կյանքը և ամբողջովին նվիրվել էր

<sup>1</sup> Ավիկ Իսահակյան, «Աֆորիզմներ», Ե., «Տիգրան Մեծ», 2001, էջ 479:

Հայաստանի փրկության գործին: Նա իր պարտքն էր համարում Սուլթանի դեմ կռվելը և կասկած չուներ, որ պետք է հաղթի: Այդ մեծ առաքելության հստակ գիտակցումը մոռացնել էր սովել սեփական անձը, որովհետև նրա կրծքի տակ բաբախող վշտակիր սիրտը Կարոյին մղում էր վճռականորեն զորավիգ կանգնել արդարությանը և արմատախիլ անել չարիքը: «Ե՞րբ պիտի մուրազիս հասնեմ, սիրտս դադար չունի, ասես հավք է վանդակի մեջ, դուրս թռչել կուզե օր առաջ» (էջ 450):

Տարիների փորձով հարստացած Ուստա Կարոն ծանր ու թեթև է անում աշխարհի բանը. «Ես իմաստուն դառա, աշխարք կարդացի, մարդու հոգին կարդացի, աշխարքը հիմնի ափիս վրա աչքիս առաջ փռված է: Կշռեցի, ծանր ու թեթև արի, իմացա, հասկացա էնոր տակն ու վրեն, գինն ու արժեքը ու կըսեմ, թե փուչ աշխարքին աչե ու ախ քաշե: ... Անհաղթ անիվ է, որ պիտի երթա, երթա, ոչ ես կրնամ դեմը կանգնի, ոչ դու, ոչ էլ մեր պապերը կրցած են, ոչ էլ մեր թոռները կրնալու են» (էջ 517-518):

Այդ մտորումներն սկսվում են իրական կյանքի առօրյա հոգսերից և հասնում երևակայության ու երազանքի ոլորտները, երազանքի մեջ էլ գտնում այդ խոհերի գունավոր պատկերը: Նման դեպքում երևակայությունը «զեղեցկացնում է իրը, առարկան, զարդարում չունեցած հատկություններով, ոսկեզօծում, դարձնում հեքիաթային»: Ահա մեկ-երկու օրինակ Ուստա Կարոյի երազանքներից. «Ջորք կկապեմ, մեծ գորք՝ հինգ հազար, տասը հազար, ու էնպես զիլ կերթամ, որ առաջս ասկյար յա քուրդ չկրնանան ճիգ քաշել: Բրդեմ, բրդեմ քուլիքին, զցեմ արևի տակը...» (էջ 228):

Կարոյի երազանքն էր Հայաստանի ձեռքում տեսնել Սասնա թուրը, որը պիտի հարվածեր հանուն բոլոր մարդկանց: Կարոն այս դեպքում մի Սասունցի Դավիթ է, որի թուրը երբեք չպետք է պատից կախվի, միշտ ձեռքում պիտի լինի իրացանը: Կարոն առասպելական կերպարանքի մեջ է պատկերացնում իրեն. «... ձիս հրեղեն պիտի եղնի, ոսկով զարդրած, ու պայտերը՝ պողպատից, ու մեխերը՝ սուր: Ես ամպերից պիտի ջուր խմեմ... Քառսուն օր կռիվ կուտամ... Էսպես կազատեմ Հայաստանը»: Ապա՝ «Ինձի համար հիմնի մեկ բան կա՝ կան Հայաստանի ազատություն, կան մահ: Կան ես, կան Սուլթանը» (էջ 406, 427):

Ուստա Կարոյի և Շրջիկ Կայծակի մտորումների շարքում կարևոր տեղ է բռնում Անի պաշտամունքը: Իր հերոսների բերանով Իսահակյանն արտահայտում է իր սրտի փափագը, մշտամորմոք վիշտը ավերված քաղաքի հանդեպ: Հայտնի է, որ բանաստեղծը արտակարգ սեր է տածել հայ ճարտարապետության գլուխգործոցի՝ Անիի հանդեպ: Նրա ստեղծագործության շատ էջեր ներշնչված են Անիով, պարունակում են նրա հավերժության իմաստը: Անին Իսահակյանի համար «քարացած բանաստեղծություն էր, քարացած երագ», հայ ժողովրդի խորհրդանիշը:

Չետազայում նա իր սրտի բաղձանքը պիտի արտահայտեր սրտառուչ բանաստեղծությամբ.

*Ա՛խ ինչքա՛ն, ինչքա՛ն կուզեի լինել*

*Ձինվոր հասարակ.*

*Չայության բուրր ոսոխների դեմ կռվեի անդուլ*

*Անհի հզոր պարիսպների տակ:*

Ուստա Կարոյի ներաշխարհը լի էր Չայաստանի ազատագրության երազանքներով, և նա զանազան ծրագրեր էր մշակում այն իրագործելու համար՝ սկսած բերդեր ու ամրոցներ կառուցելուց մինչև Անհի համար մարտնչելն ու Սուլթանին թախտից գցելը: «Ա՛խ, եղևի էդ ժամանակ ու Անհի քաջերի հետ կռվեի դուշմնի դեմ ու արունս խառնեի էնոց արունին» (էջ 307): Այս խոսքերը հիշեցնում են Իսահակյանի բանաստեղծություններից մեկը, ուր գրված է.

Կարոյի միտքը շարունակում է Կայծակը. «Մենք կստեղծենք նոր Անի, մոխիրների միջից դուրս կգա նոր Անի. հիմքը՝ մեր նահատակների սուրբ ոսկորների վրա, շաղախը՝ մեր սուրբ արյունով...» (էջ 298):

Այդ սուրբ նպատակն իրականություն դարձնելու համար Շրջիկ Կայծակը լինում է Չայաստանի տարբեր վայրերում և ձգտում կազմակերպել միասնական պայքար և իրականություն դարձնել Չայաստանի փրկության վաղեմի երազանքը: Սակայն, դժբախտաբար, հաճախ խոսքն ու գործը հակասում են իրար, և ազգի մեծները խոսքից չեն անցնում գործի: Մարդիկ պետք է աշխատեն մեծ խոսքը գործ դարձնել, օգնել նյութապես ու բարոյապես, սիրտ ու հոգի դնել նման գործի մեջ:

Իսահակյանի համար (ինչպես և Թումանյանի) սիրտը յուրատեսակ գաղափարական խորհրդանիշ է, որ իր մեջ ամփոփում է մարդկային երջանկության կարևորությունը: Փաստորեն սիրտը դառնում է հավաքական կերպար և ներառում է մարդու բարոյական նկարագրի մաքրությունը, անաղարտությունն ու բարի ցանկությունը: Խոսելով մարդու հոգու վեհամձմության մասին, Ուստա Կարոն ասում է. «... բանը սրտի մեջն է, մարդու սրտից պիտի բխա բանը: Սիրտը որ ուզե՞նա, ձեռքը կուտա. ա՛յ, էնքան հարուստ, Աստծու կրակի տեր հայեր կան, որ ուզե՞նան, չէ թե հինգ միլիոն էլ կտան, հինգ անգամ հարյուր միլիոն էլ կտան, համա չեն ուզե՞նա, քանի որ հայի հոգի չունին» (էջ 47):

Սիրո և կնոջ խնդիրը մշտապես զբաղեցրել է բանաստեղծին: Վեպում ևս այդ հարցը կարևոր տեղ է գրավում և զբաղեցնում է Ուստա Կարոյի միտքն ու հոգին. «Աշխարհքի հիմքը կնիկն է», - ասում է Ուստա Կարոն և երիտասարդներին խորհուրդ է տալիս՝ «Ջահելի աչքով ձի առ, ահելի աչքով՝ կնիկ»:

Վեպում առանձին սյուժետային գիծ է ներկայացնում Ուստա Կարո-Սանան սիրո պատմությունը: Երբ Ուստա Կարոն սկսում է իր «պատմությունների գեղեցիկ, ոսկեհյուս քարվանդ քշել», այսինքն՝ երբ նա երևակայության աշխարհից նոր աշ-

խարհ էր ստեղծում և բաց էր թողնում «երևակայության թևերը», Սանանը հիանում էր նրա խոսքի կախարհիչ ուժով և պատմելու վարպետ եղանակով: «Սանամի հայացքը ուղղակի հրդեհել էր Կարոյի երևակայությունը: Կարոն իր քարավանի գլուխը բաց էր թողել, և ոչ մի խոչ ու խուժ, սար ու ծով չէր կարող նրան սանձել» (էջ 190): Ուստա Կարոն սիրահարված մարդու տեսանկյունով գնահատում, արժևորում է սիրո էությունն ու նշանակությունը. «Սերը զուլում կրակ է, մարդու տղամարդ կդարձնե, մարդու պզտիկ Աստված՝ կշինե, մարդ անմեռ կեղնի: Առանց սիրո աշխարհքը չարժե չիբուխիս ծխին... Կտրիճը չի մեռնի գյուլլից, կտրիճ մարդուն մենակ կնիկը կրնա համ մեռցնել, համ կյանք տալ...» ( էջ 273-274):

Ուստա Կարոն պատրաստ է Սանամի համար ոչ միայն զոհվել, այլև զմրուխտե սարի գլխին ավաստե պալատ կառուցել, անմահական ջուր բերել, մարմարե շատրվաններ շինել, դրախտի այգիներ տնկել և այլն: Այս խոսքերը հիշեցնում են երիտասարդ Իսահակյանի սիրո քնարի փայլատակումներից մեկը.

*Ինչ որ ցանկաս կուզես լինիմ,  
Լինիմ երկինք ու երկիր,  
Լինիմ ծով, ժայռ, արև, լուսին,  
Սիայն, միայն ինձ սիրիր....*

Ուստա Կարոն միաժամանակ ծանր ու թեթև է անում, գնահատում կնոջ դերը մարդու կյանքում, քննում կանանց առեղծվածային էությունը. «Կնիկ ասածո աղի ջուր է, քանի շատ խմես, կծարվնաս: Իսկ ուրիշների կնանիքը ծով է, ծով՝ շոռ ու բորակ, համ կխեղդվիս, տակը չես առնի, համ էլ որ սաղ ծովը գլուխդ քաշես, խմես՝ էլի ծարավ կմնաս: Իրեն կնիկը էլի ամենից անուշն է: Մի գավ անուշ ջուրը չեմ փոխի աշխարքի ծովերի հետ» (էջ 372-373): Ուստա Կարոն միաժամանակ զուգահեռի վրա է դնում կնոջ և հայրենիքի հանդեպ տածած սերը: Որքան էլ որ բարձր գնահատեր կնոջ դերը մարդու կյանքում, Ուստա Կարոն, որպես անձնվեր հայրենասեր, պիտի խոստովաներ, որ իր համար ամենագլխավորը հայրենիքի սերն է. «Քառասուն հազար Սանամ չեմ փոխի Հայաստանի մի թիզ հողի հետ», «Հայաստանի մի ափ հողը չեմ փոխի աշխարքի հարսերի հետ», «Մարուք ջան, Սանանը աչքիս էլ էտու հետ հեչ: Սուտ չկա, իմ սերն ու տերը հիմի ազգն է...» (էջ 399, 432):

Վեպում սփռված թևավոր խոսքերը, փիլիսոփայական խոհերը ուղղակի կամ այլաբանորեն բացահայտում են ժողովրդի կողմից մարդկային հարաբերությունների այս կամ այն կողմը, լավի ու վատի, բարու և չարի մասին եղած կարծիքները, ճշմարտացիորեն արտահայտում են հասարակության սոցիալ-քաղաքական, իրավական, կենցաղային հարաբերությունների, դարերի ընթացքում մեր ժողովրդի ապրած միջավայրի, կյանքի ուրույն պայմանների և մարդկանց բնավորության գծերի բուն էությունը:

Ուստա Կարոն ցանկանում է յուրովի հասկանալ և ըմբռնել կյանքի հավեր-

ժուռայան խորհուրդը, թափանցել նրա անհիմանալի խորքերը և ցավով է ընդունում այն իրողությունը, որ մարդկային կյանքն անցողիկ է ու ժամանակավոր:

Ինչպես չափածո գործերում, այստեղ ևս Իսահակյանն անդրադառնում է մարդուն մտահոգող և համաշխարհային վշտի վերածված համամարդկային պորբլեմներին: Մտքի և զգացմունքի փոխադարձ կապի միջոցով, դիպուկ և խոսուն պատկերներով հեղինակը խարազանում է քրտինք չթափող, հեշտ վաստակի հետևից ընկած մարդկանց. «Լավը ցույց կուտան էդոնք, գեշը կքաշեն վրեներս: Օձ խուզողներ են էդոնք: Օրն ամբողջ քաք են կացել սալանդոստի, մամուկի պես դախըլների հետևը, որ ճամճ գտնեն, եղը ծծեն» (էջ 332):

Ուստա Կարոն դատապարտում է մարդկային ազատությունը, կուտակելու մոլուցքը, ուրիշներին կողոպտելու ձգտումը. «Մարդու աչքը աշխարքով էլ չի լիանա, մենակ գերեզմանի հողը կկշտացնե հողեղենի աչքը», -ասում է Ուստան և օրինակ բերում ժլատ ու կծծի հարուստին, որի բաց մնացած աչքը մեռնելիս փակվում է գերեզմանից բերված մի բուռ հողով (էջ 383):

Ուստա Կարոյի ուշադրության կենտրոնում են մաս ընչազուրկ մարդկանց ծանր վիճակը, աղքատության հետևանքները: Իսահակյանը ներկայացնում է զանազան դեպքեր գյուղացիների առօրյա կյանքից, հոգսերից, նրանց սոցիալական ծանր վիճակից և փաստերով հաստատում, որ կյանքում կատարվող հակահասարակական արարքների մեծ մասը հետևանք է կարիքի ու աղքատության: Գյուղացի Կնոն «Մի տուն լիքը երեխաներին» կերակրելու համար այլուր էր գողացել: Նրա մասին ասում են, որ եթե երեխաներին թոմիրը լցնես, շորահոտ դուրս չի գա, «Տաշտը լվացել, պատից կախել են, մի կարկատանը մեկելին հազար էրնեկ կուտա, ետնյալ աղքատ է»: Երբ Կնոն ազնվաբար խոստովանում է իր մեղքը, Ուստա Կարոն ներում է, որովհետև, ըստ նրա՝ «... աղքատությունը մարդու հուր ու թուր կդարձնե: Աղքատ մարդը Աստված չի ունենա... Անոթի շունը փուռը կքանդե» (էջ 358): Ինչպես «Չանբերանքի չիբուխը» պատմվածքում Օհան Ամին, այստեղ էլ Ուստա Կարոն, անդրադառնալով հարուստների և աղքատների միջև ծագող կռվին, ասում է. «Կռիվը, կըըսեն, ուրտի՞ց կեղմի... մեկը կուտե, հազարը բերանաբաց կնայե, կռիվն էլ էդտեղից կծագի» (էջ 383): «Շատ դատողին շալե շապիկ, քիչ դատողին՝ դումաշ վարտիք», -շարունակում է Ուստա Կարոն և վկայակոչում Ավետարանը ու մարդկանց խորհուրդ է տալիս լինել բարի և ազնիվ, միմյաց օգնել, իրար թև ու թիկունք լինել: «Դու իմ հացին եղ քսե, որ ես էլ քու բրդունին մեղդ տամ», «Աստված հո չի՞ իջնելու երկնքից՝ մեր գործերը կարգավորե, մարդը պիտի մարդու գործը առաջ տանե», -ասում են գյուղացիները և ավելացնում. «Մարդ մեջք ունենա, բեռ դնող շատ կեղմի» (էջ 355, 357):

Աղքատ ժողովրդի դժվարին կացությունը պատկերելու հետ միասին Իսահակյանը ցավով է անդրադառնում մաս պարտատերերի ու պարտապանների

փոխհարաբերության հարցին, նշում, որ հարկերն ու տուրքերը ծայրաստիճան վատթարացրել են գյուղացու վիճակը: «Պարտքը կրակե շապիկ է», որ այրում է մարդու մարմինը,-ասում է Ուստա Կարոն և ավելացնում Դավիթ մարգարեի խոսքը՝ «Պարտքը՝ տալով, մեղքը՝ լալով»: «Շահով փող տալը յոնջալըղ է, հա քաղես, քաղես, պարպե չունի», «Պարտքը պատանք է»,-փիլիսոփայում է Ուստա Կարոն (*էջ 365, 381*):

Ուստա Կարոն ասում էր Տեր Վահրադին և Ղուկաս աղին, որոնք «յոթ տակ կաշի էին քերթում» խեղճ գյուղացիներից: «Վայ, թե մեկը ընկներ Ղուկասի ապառիկների մատյանը, այլևս դուրս գալ անհնար էր, ուղղակի որոգայթ էր... քանի՜-քանի՜ ընտանիքներ է ավերել Ղուկասը, եզն ու կովը ծախել, արտի երեսը տարիներով առել...»,– ասված է վեպում, իսկ Չարուքը ավելացնում է. «Տերտերի պես միրուքավոր էծերը ժողովրդին իրենք կուտեն, գիլուն ի՞նչ կմնա» (*էջ 474, 531*):

Բազմաթիվ են այն խորիմաստ մտքերը, որոնք վերաբերում են Ուստա Կարոյի հոգեկան ծանր վիճակին՝ «Կարսի թագավոր» Պլոյի նամակից հետո: Ուստա Կարոյի բոլոր երազանքները ջուրն են լցվում: Նրա հոգին ալեկոծվում էր, վիշտն ու զայրույթը կրծում էին Ուստի սիրտը, և նա կարծես լալիս էր իր լուսավոր պատրանքների խորտակման պատճառով: Ուստա Կարոյի խոհերը պտտվում էին աշխարհի սխալ կառուցվածքի ու մարդկային հեղեղուկ բնույթի շուրջ, և նա դառնորեն ասում է. «Վազող ձիու գլխուն պետք չէ, որ զարկեն», «Ասլանը մուկ չի բռնե, բայց մուկը ասլանի քեֆը գլխուն խռով կենե», «Մի անցիր նամարդի կամուրջով, թող ջուրը քեզի տանի», «Մի քնի աղվեստի շուքի մեջ, թող առյուծը քեզի ուտի» (*էջ 454, 478, 501*):

Ուստա Կարոյի խոհերը շարունակվում են նաև վեպի վերջին գլխում, ուր հեղինակը ցույց է տալիս Կարոյի երազանքը Հայաստանի փրկության վերաբերյալ:

Նրա երազանքն էր՝ ազատել Հայաստանը կամ մեռնել նրա համար: Ուստա Կարոյին շրջապատողները հուսադրում են նրան, ցանկանում են դուրս բերել տխուր մտորումների վիճակից, ասելով. «Ուստա, դու խոշոր մարդ ես, դարդը քեզի համար՝ հեչ, դու դարդից էլ մեծ ես: ... Դու ազգի ճրագն ես, ճրագն իր տակը լույս չի տան, դու ապրար ուրիշին լույս տալու համար», «Մարդիկ ճշմարտությունն ու արդարությունը հացի հետ կերել, ջուրն են խմել վրեն» (*էջ 520, 531*):

«Ուստա Կարո» վեպը ընթերցողին բերում է այն ճշմարիտ համոզման, որ ինչպես անցյալի դժվարին պայմաններում ստեղծված ժողովրդական իմաստությունների կենսափիլիսոփայության հիմքում ընկած է լավատեսությունը, այնպես էլ Իսահակյանի փիլիսոփայական մտորումները ներշնչում են հույս ու հավատ, հաստատում են, որ անհաջողությունը, չարիքը հավերժական չեն, և որ վաղ, թե ուշ հաղթելու են բարին ու ազնիվը, արդարն ու ճշմարիտը: Կայծակի խոսքերը



հաստատում են Վարպետի լավատեսությունը. «Յի՛ն է մեր արմատը և խոր, և ամուր, իսկ մեր հոգի՛ն նոր է և թարմ, թեև մեր վիշտը մեծ է, և մեր ճանապարհը՝ զուր ու մոլոր, բայց կհասնենք մեր նպատակին, որը մեր մեծ նահատակները հազար արևներով վառել են մեր աչքերի դիմաց» (էջ 308):

## **МЕТАФИЗИЧЕСКИЕ И ФИЛОСОФСКИЕ РАЗДУМЬЯ В РОМАНЕ А. ИСААКЯНА „УСТА КАРО”**

**ԱՅՎԱԶՅԱՆ Օ. Օ.**

### РЕЗЮМЕ

В роман Уста Каро А. Исаакян вложил всю мудрость своей жизненной позиции и весь опыт вековых страданий родного народа.

А. Исаакян прекрасно знал все достижения мировой литературы, что помогло ему создать глубоко национальный эпос, где смог мастерски переплести реальное и мифическое.

Главный образ романа - Уста Каро — своеобразный, философ, который и одновременно чувствует себе героем, сражающимся вместе со своим народом против несправедливой судьбы.

Часто встречающиеся в романе крылатые выражения, философские раздумья прямо или иносказательно раскрывают те или иные стороны человеческих связей, правдиво отображают истинную сущность социально-политических, правовых, бытовых отношений в обществе, специфику жизненных проблем и людских характеров.

## **PHILOSOPHICAL THOUGHTS EXPRESSED IN THE NOVEL „OUSTA KARO” BY AVETIK ISAHAKYAN**

**H. AIVAZYAN**

### SUMMARY

Deeply aware of the world literature masterpieces, Isahakyan created an epos of superior quality interlaced the myth with reality.

The leading literary image of the novel Ousta Karo is a specific hero who considers the good and the evil in the world. At the same time he feels himself to be a struggling hero for the destiny of his own nation.

The expressions widely-spread through out the novel, philosophical thoughts directly or in an allegoric way reveal some specific features of human relationships by his nation, truly express the nature of socio-political, legal routine relationships, life conditions and human traits of the whole society.